Խոսրով Ապրուէզի Tag i Bostan–ի չէնքի խոյակին,* բնականաբար, առանց Անահիտ դիցուհու պատկերաքանդակին (Պատկ. 21), դիցուհու փոխարէն խաչաքանդակ։ Այստեղ կայ եւ մի գերեզմանական կոթող վատ պահուած վիճակում, բայց բազիլիք եկեղեցիների հետ կապուած կոթողների նման, որոնց մասին խօսք կը լինի այս աշխատութեան երկրորդ մասում։ Մի եկեղեցի եւս կար Ղարաքիլիսէ գիւղում, դէպի Լենինական տանող խճուղու վերայ, որ քանդուած եւ տեղը նոր եկեղեցի է շինուած. այստեղ էր Հասան Գնթունու արաբական շրջանի Ժ.–ԺԱ. դարերին յատուկ օրօրոցաձեւ գերեզմանաքարը, որ էջմիածնի թանգարան տեղափոխեցինք, նախապէս ձգուած լինելով գիւղացի մի ննջեցեալի վերայ։ Ասել չենք կարող թէ եկեղեցին ո՞ր դարի եւ ի՞նչ տիպի գործ էր։

պարզ ձեւերով հեթանոսական մեհեաններ են եղել, ինչպէս Տիկորը, Երերոյքը, Մրենը, Բասախը, Օձունը, եւ ապա վերածուել քրիստոնէական եկեղեցիների, այդ փոփոխութեան հետ կապելով եւ նրանց դմբեթաւորումը։ Զէնք վիճում առաջին մասի կարելիութեան դէմ, այսինքն, թէ բազիլիք, կ'աւելացրնենք նաեւ քառանկիւնու վերայ դմբեթաւոր չէնքեր կամ տաճարներ կարող էին լինել Հայաստանում քրիստոնէութեան հաստատութիւնից էլ առաջ, որովհեաեւ նրանց հնագոյն երեւոյթներն իսկ հարիւրաւոր տարիների անցեալ է ենթադրում, սակայն նրանց դմբեթաւորումը քրիստոնէական կրօնի անմիջական պահանջներից չէր բղխում. Ասորիքում փառաւոր եկեղեցիներ կային առանց դմբեթի եւ այդ արդելք չէր պաշտաման տեսակէտով,

Պատկ. 21

Զ.

Բայց Պողոսանքով պարզում է եւ մի այլ խնդիր, թէ զարգացման նոյն գործողութիւնն է կատարուել նաեւ անջատ մոյթերի վերայ հաստատուած դմբեթաւոր երկարաձիգի նկատմամբ։ Թորամանեանը Տիկորին նուիրած իւր աշխատութեան մէջ այն միտքն է արծարծում, թէ այդ կարգին պատկանող մեր մի քանի չէնքերը իրենց նախնական

այլ ինչպէս Պողոսանքի վերայ տեսանք, երկու գեղարուեստական հոսանքների փոխադարձ ազդեցութեան եւ միութեան հետեւանք, որ վերջանում է եռանաւ բազիլիկաների դմբեթաւորմամբ եւ տեղական — իրանական հոսանքի յաղթայարութեամբ։ Այդ գործողութիւնը կատարւում է երկու գծով. եռանաւ բազիլիկայից Օձուն, Գայիանէ, Բագրեւանդի Ս. Յովհաննէս, Մրեն. իսկ միանաւ բազիլիկայից Ծառայիչէն, Պողոսանք, Արուճ, Երազգաւորս։ Վերջինը իրեւ Բագրատունեաց վերածնութեան շրջանի գործ։

*Sarre. Die Kunst des alten Persien. 1922. կամ F. Sarre u. Herzfeld. Iranische Felsreliefs. p. 211. Պատկ. 110: